ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.12.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/326

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.12.2021թ. թիվ 26/26-1/20554-2021 գրությամբ «Արմա թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 09.12.2021թ. թիվ Ե/13/3216-21 գրության հիման վրա, 14.12.2021թ. թիվ 26/26-1/20554-2021 գրությամբ նախաձեռնել է «Արմա թրեյդ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Արմա թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Արմա թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Արմա թրեյդ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/326 ընթացակարգի շրջանակներում 22.12.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 09.12.2021թ. թիվ Ե/13/3216-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տուրբոգեներատորի պահեստամասեր ТВВ-220-ЕУЗ» ապրանքների ձեռքբերման նպատակով «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-13/21» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «Արմա թրեյդ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2021թ. մարտի 19-ին կնքվել է թիվ ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-13/21-01/028 պայմանագիրը, որը «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից միակողմանի լուծվել է, քանի որ «Արմա թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ապրանքները չեն մատակարարվել:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի ա. պարբերության դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 45-րդ կետը, Ձեզ ենք ներկայացնում մասնակցի տվյալները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/326 ընթացակարգի շրջանակներում 22.12.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2021/326 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2021/326 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Արմա թրեյդ» ՍՊԸ-ի միջև 19.03.2021թ. կնքվել է թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-13/21-01/028» ծածկագրով պետության կարիքների համար տուրբոգեներատորի պահեստամասեր ТВВ-220-2ЕУ3 մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված տուրբոգեներատորի պահեստամասեր ТВВ-220-2ЕУ3, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է հետևյալը.

Ապրանքի						
հրավերով նախատեսված չափաբաժնի համար	անվանումը	չափման միավորը	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
2	Խոզանակաբռնիչ	հատ	30	ՀՀ Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, «ՀԱԷԿ» ՓԲԸ	30	Պայմանագրի կնքման օրվանից 240 օրացուցային օրվա ընթացքում
3	Խոզանակաբռնիչ	հատ	10		10	
4	Խոզանակաբռնիչ	հատ	10		10	

3. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն «Արմա թրեյդ» ՍՊԸ-ին ուղղված 03.12.2021թ. թիվ Ե/13/3162-21 գրությամբ, հայտնել է հետևյալը.

««Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար տուրբոգեներատորի պահեստամասեր ТВВ-220-ЕУ3 (այսուհետ՝ ապրանք) ձեռքբերման նպատակով ս/թ մարտի 19-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-13/21» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մատակարարման նպատակով «Արմա թրեյդ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2021թ. մարտի 19-ին կնքվել է թիվ 01/028 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 3540000 (երեք միլիոն հինգ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր գնով: Պայմանագրով մատակարարվող 2-րդ չափաբաժնով սահմանված 30 հատ խոզանակաբռնիչ, որի ընդհանուր գինը կազմում է 2124000 (երկու միլիոն հարյուր քսանչորս հազար) ՀՀ դրամ, 3-րդ չափաբաժնով սահմանված 10 հատ խոզանակաբռնիչ, որի ընդհանուր գինը կազմում է 708000 (յոթ հարյուր ութ հազար) ՀՀ դրամ, «Արմա թրեյդ» ՍՊԸ-ի կողմից չեն մատակարարվել:

Համաձայն վերոհիշյալ Պայմանագրի՝

2.4.1. կետի «Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով»:

2.4.2. կետի «Վաճառողը պարտավոր է ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում»:

2.4.4. կետի «Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով»:

Հավելված N1-ի Վաճառողը պարտավոր է մատակարարումը իրականացնել Պայմանագրի կնքման օրվանից 240 օրացուցային օրում:

Հիմք ընդունելով հիշյալ պայմանագրի 2.1 կետը այն է, գնորդը իրավունք ունի՝

2.1.1. ապրանքը սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի,

2.1.7 միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե էականորեն խախտվել է պայմանագիրը,

2.1.7.1. Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «Արմա թրեյդ» ՍՊԸ-ի հետ 2021թ. մարտի 19-ին կնքած թիվ 01/028 պայմանագիրը 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով:

Հայտնում ենք նաև, որ չմատակարարված ապրանքի մասով Ձեր կազմակերպության նկատմամբ կկիրառվեն նաև պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժերը և տուգանքները»:

4. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 04.12.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 14.12.2021թ. թիվ 26/26-1/20554-2021 գրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 09.12.2021թ. թիվ Ε/13/3216-21 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց

հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Արմա թրեյդ» ՍՊԸ-ի միջև 19.03.2021թ. կնքվել է թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-13/21-01/028» ծածկագրով պետության կարիքների համար տուրբոգեներատորի պահեստամասեր ТВВ-220-2ЕУ3 մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված տուրբոգեներատորի պահեստամասեր ТВВ-220-2ЕУ3, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է հետևյալը.

Ապրանքի						
հրավերով նախատեսված չափաբաժնի համար	անվանումը	չափման միավորը	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
2	Խոզանակաբռնիչ	հատ	30	ՀՀ Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, «ՀԱԷԿ» ՓԲԸ	30	Պայմանագրի կնքման օրվանից 240 օրացուցային օրվա ընթացքում
3	Խոզանակաբռնիչ	հատ	10		10	
4	Խոզանակաբռնիչ	հատ	10		10	

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն «Արմա թրեյդ» ՍՊԸ-ին ուղղված 03.12.2021թ. թիվ Ե/13/3162-21 գրությամբ, հայտնել է հետևյալը.

««Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար տուրբոգեներատորի պահեստամասեր ТВВ-220-ЕУ3 (այսուհետ՝ ապրանք) ձեռքբերման նպատակով ս/թ մարտի 19-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-13/21» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մատակարարման նպատակով «Արմա թրեյդ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2021թ. մարտի 19-ին կնքվել է թիվ 01/028 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 3540000 (երեք միլիոն հինգ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր գնով: Պայմանագրով մատակարարվող 2-րդ չափաբաժնով սահմանված 30 հատ խոզանակաբռնիչ, որի ընդհանուր գինը կազմում է 2124000 (երկու

միլիոն հարյուր քսանչորս հազար) ՀՀ դրամ, 3-րդ չափաբաժնով սահմանված 10 հատ խոզանակաբռնիչ, որի ընդհանուր գինը կազմում է 708000 (յոթ հարյուր ութ հազար) ՀՀ դրամ, «Արմա թրեյդ» ՍՊԸ-ի կողմից չեն մատակարարվել:

Համաձայն վերոհիշյալ Պայմանագրի՝

2.4.1 կետի «Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով»:

2.4.2 կետի «Վաճառողը պարտավոր է ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում»:

2.4.4 կետի «Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով»:

Հավելված N1-ի Վաճառողը պարտավոր է մատակարարումը իրականացնել Պայմանագրի կնքման օրվանից 240 օրացուցային օրում:

Հիմք ընդունելով հիշյալ պայմանագրի 2.1 կետը այն է, գնորդը իրավունք ունի՝

2.1.1. ապրանքը սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի,

2.1.7 միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե էականորեն խախտվել է պայմանագիրը,

2.1.7.1. Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «Արմա թրեյդ» ՍՊԸ-ի հետ 2021թ. մարտի 19-ին կնքած թիվ 01/028 պայմանագիրը 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով:

Հայտնում ենք նաև, որ չմատակարարված ապրանքի մասով Ձեր կազմակերպության նկատմամբ կկիրառվեն նաև պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժերը և տուգանքները»:

<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 04.12.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:</u>

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին</u>***

<u>մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են ***<u>10 օրից ավելի</u>***:

Պայմանագրի 6.6 կետի համաձայն՝ Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այսպիսով՝ վերը շարադրված փաստական հանգամանքների ուժով՝ արձանագրում եմ, որ «Արմա թրեյդ» ՍՊԸ-ն խախտել է իր և «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի միջև 19.03.2021թ. կնքված Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչի արդյունքում Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Արմա թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցերի ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.12.2021թ. թիվ 26/26-1/20554-2021 գրությամբ «Արմա թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Արմա թրեյդ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**